ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«31» 01 2023թ.
№ պետ/2-134

Սենիկ Խաչատրյան Ա/Ձ-ին
ՀՎՀՀ 47824132
ՀՀ, ք. Մասիս, Նոր Թաղամաս, շ.32, բն.38
հեռ. 077 430-716

ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Սենիկ Խաչատրյանի միջև 28.06.2022թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-22-20/3-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ա/Ձ Սենիկ Խաչատրյանը 2022թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներում պետք է մատակարարեր զանազան պահեստամասեր, որոնցից 10 123 608 ՀՀ դրամի պահեստամասեր չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. հունվարի 30-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը չմատակարարված պահեստամասերի մասով:

Տեղեկացնում եմ, որ Ա/Ձ Սենիկ Խաչատրյանը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո, 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 330 603 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը միաժամանակ ձեռնարկում է միջոցներ՝ Ա/Ձ Սենիկ Խաչատրյանի կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումների գանձման ուղղությամբ, որոնք համապատասխանաբար կազմում են 6 999 996 ՀՀ դրամ և 1 518 541 ՀՀ դրամ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ